ԹԵՄԱ 1. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

§ 10. ԱՔԵՄԵՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ

1

Հույն պատմահայր Հերոդոտը հաղորդում է, որ երբ Կյուրոս Մեծը սկսեց մեկը մյուսի հետևից գրավել Փոքր Ասիայի երկրները, Լիդիայի արքա Կրեսոսը խիստ անհանգստացավ: Նա դիմեց Դելֆյան պատգամախոսին՝ հարցնելով՝ արդյոք ինքը կհաղթի, եթե պարսիկների դեմ արշավանք սկսի: Դելֆյան պատգամախոսը պատասխանեց. «Եթե Կրեսոսն արշավի պարսիկների դեմ, ապա մի մեծ տերություն կկործանվի»:

Կրեսոսն այս պատասխանից ենթադրեց, որ պատերազմում կործանվող տերությունը Աքեմենյան տերությունն է լինելու: Սակայն պատերազմն ավարտվեց Լիդիայի պարտությամբ: Կրեսոսը կորցրեց իր գահը և տերությունը: Գուշակությունը ճիշտ դուրս եկավ՝ մի մեծ տերություն կործանվեց:

2

Ամենագլխավորը ***«Արքայական ճանապարհն»*** էր, որի երկարությունը մոտ 2000 կմ էր: Այն ձգվում էր Էգեյան ծովից ողջ Փոքր Ասիայի տարածքով և Հայաստանի հարավային մարզերով մինչև Պարսից ծոց: Ճանապարհին կառուցված էին իջևանատներ և փոստատներ: Կիրառվում էր փոստի փոխանցման էստաֆետային եղանակը:

Պերսեպոլիս քաղաքը կառուցվեց բուն Պարսկաստանում՝ ի ցույց պարսից արքաների հզորության և հարստության: Քաղաքի շինարարությունը սկսվեց Դարեհ I-ի օրոք: Հաջորդ արքաները այստեղ նորանոր պալատներ են կառուցել: Այստեղ են գտնվում և Աքեմենյան արքաների դամբարանները:

3

Ք.ծ.ա. 401 թ. գահակալական պայքար տեղի ունեցավ Արտաքսերքսես II արքայի և նրա եղբայր Կյուրոս Կրտսերի միջև: Կյուրոսը 10000 հույն զինվոր վարձեց, որոնց օգնությամբ հաղթեց արքայի բանակին, բայց ինքը ճակատամարտում զոհվեց: 10000 հույն վարձկանները ստիպված էին մեծ դժվարություններով դեպի Սև ծով նահանջել Հայաստանի տարածքով: